

սին քաղաքին կրթեալ մասն . այդ գործոյն համար մեծ գիտութիւն և մեծ խելք ևս հարկաւոր չէ . ամենայն հայկական ականջ կը զանազանէ որ աւելի ընտրելի է խորդաձայն թաթար բառերուն տեղ՝ կօկ հայերէնը գործածել, ինչպէս շրտըխի տեղ՝ հիւ մայ, ալայ մայայի տեղ՝ բոլորովին, ալիալ քալիալի տեղ՝ աճապարելով հեղպեթի տեղ՝ հարկաւ : Նոյնպէս վերջին ժամանակի ուսու եկամուտ բառերուն տեղ նորա հայկականը գործածել . գրագէտ Նախիջևանցին չի գրուցել սիւքրստոշիւն, այլ թացութիւն խոնաւութիւն, չի գրուցել ուշիցա, այլ փողոց . ոչ փողոցատ, այլ հրապարակ . ոչ քոչոռ, այլ կառավար : Ըստ իմ կարծեաց Նախիջևանու հին և ընտիր աշխարհաբան խանգարման մեծապէս պատճառ կրնան լինել, գեղերու ոմանց մէջ գտնուած կովկասցի ուսուցիչք . նախ սոքա տղայոց զարգացումը հարկաւ քանի մի տարի ետեւ կը ձգեն, զի ոչ տղայք վարժապետին գրուցածը կը հասկնան, և ոչ վարժապետը տղայոց լեզուն . երկրորդ հաւանական է որ շատ անգամ տղայոց գեղեցիկ անցի բացատրութիւնք՝ անիմանալի լինելով վարժապետաց համար, ծաղրածութեան նիւթ կը լինին : Որչափ գովելի բան կը լինէր, եթէ Նախիջևանցիք շուտով իրենց դպրավանուց և այլ վարժարանաց մէջ գեղերու և քաղաքին ուսումնարանաց համար վարժապետ պատրաստէին . որով մեծապէս՝ փոքր տղայոց իրենց մայրենի գեղեցիկ աշխարհաբար լեզուաւ զարգանալուն պատճառ կը լինէին :

1. « Մանի մանի մի ասել » կովկասցւոյն անիմանալի է . « խելքս ման կու դայ », նոյնպէս անսովոր կովկասցւոց . « Ճրագ անցուր . » մարտի տեղ . « ապուլ տուեց լեռնէն վար », թողուց, և այլն :